ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 4
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ

քաղ. Երևան «11» հոկտեմբերի 2024թ.

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ համապատասխան մարմին)՝ ի դեմս համապատասխան մարմնի գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Մարիամ Արսենի Եկմալյանը, գրանցված՝ քաղ. Երևան, Ս.Տարոնցու փ., շ. 7/2, բն.12, նույնականացման քարտը՝ 015498421, տրված 001-ի կողմից 23.02.2024թ. (այսուհետ՝ փորձագետ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է համապատասխան մարմնի թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման բաժնի պետին (այսուհետ՝ Բաժնի պետ): Աշխատանքների կատարման վայրն է՝ համապատասխան մարմնի գտնվելու վայրը:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1. փաստաթղթերի և տեղեկատվության հոսքի կառավարման համակարգի գործնական ներդրման և փորձարկման գործընթացի իրականացում.

1.3.2. Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների առանձնահատկությունների ուսումնասիրում և Բաժնի պետին ներկայացնելը՝ ներքին ընթացակարգերի թվայնացման նախագծի իրականացման նպատակով,

1.3.3. որակի աուդիտի անցկացման ընթացակարգերի մշակման գործընթացներին աջակցում.

1.3.4. փաստաթղթերի ձևաչափային ստանդարտացման իրականացում.

1.3.5. գործող պահանջներին ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով իրականացված գործընթացների համապատասխանության վերահսկում.

1.3.6. ներքին աշխատանքային գործընթացների մշտադիտարկման և համակարգային կատարելագործման իրականացում՝ Բաժնի պետին առաջարկելով համակարգային թերությունների և անհամապատասխանությունների շտկման ուղիներ,

1.3.7. որակի կառավարման համակարգի գործընթացների արդյունավետության վերլուծությունների իրականացնում և դրանց վերաբերյալ պարբերաբար զեկույցներ ներկայացնելը Բաժնի պետին,

1.3.8. Կոմիտեի պաշտոնական կայքի տեղեկատվական շրջանառության ապահովվում,

1.3.9. Տվյալների կառավարման համակարգերի ավտոմատացման նորարարական լուծումների ուսումնասիրություն,

1.3.10. որակի կառավարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընթացակարգերի օպտիմալացման ծրագրերի և գործիքների մշակում,

1.3.11. թվայնացման գործընթացների ներդրման ժամանակացույցի և գործողությունների պլանի մշակում,

1.3.12. ներքին ընթացակարգերի թվայնացման մեթոդների փորձարկում և գնահատում՝ ընդհանուր ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով,

1.3.13. գործընթացների համապատասխանության գնահատման մեթոդների մշակում,

1.3.14. որակի կառավարման գործընթացների վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն:

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է հիմնական:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 09:00, ավարտը՝ ժամը 18:00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 328 640 (երեք հարյուր քսանութ հազար վեց հարյուր քառասուն) դրամ:

4.2. Փորձագետի պարգևատրումները նախատեսվում ու վճարվում են ընդհանուր հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4.3. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 21-ից և գործում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համապատասխան մարմինը	Փորձագետը
գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյան	Մարիամ Արսենի Եկմալյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«02» հոկտեմբեր 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 511-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի թիվ 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) որակի կառավարման հարցերով փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
նախագահի 2024 թվականի ....-ի
N .....-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

I. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) վերապահված գործունեության ոլորտում Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

2. Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը և պահանջները սահմանված են Կոմիտեի և Կոմիտեի Թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման բաժնի կանոնադրություններով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) Հավելված 19-ով և Դոկ. 9734-ով, ինչպես նաև Եվրոպական միության թռիչքային անվտանգության գործակալության (այսուհետ՝ ԵԱՍԱ) կանոնակարգերով: Կոմիտեի Թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման բաժինը (այսուհետ՝ Բաժին)՝ լինելով նորաստեղծ և ունենալով միջազգային պահանջներով պայմանավորված կարճ ժամկետներում որակի կառավարման համակարգի ներդրման աշխատանքների մեծ ծավալներ ու համապատասխան որակավորված մասնագետների պակաս, անհրաժեշտ է համարում համապատասխան փորձագետի ներգրավումը, հատկապես ՀՀ-ի՝ Եվրոպական միության Թռիչքային անվտանգության ցուցակից («սև ցուցակ») դուրս գալու հրատապ քայլերի շրջանակներում:

Որակի կառավարման համակարգի մշակման, փորձարկման և ներդրման գործընթացների ժամկետային պահանջները խիստ սահմանափակ են, ինչը մեծացնում է մարդկային ռեսուրսների սակավության խնդիրները: Աշխատակազմի պակասի և մեծածավալ բարդ աշխատանքների համակցությունը ստեղծել է իրավիճակ, որը պահանջում է որակավորված փորձագետի ներգրավում՝ ապահովելու որակյալ աշխատանքների ճշգրիտ և ժամանակին կատարումը, գործընթացների արդյունավետությունը և ընթացիկ խնդիրների շտկումը:

II. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝ բարձրագույն կրթություն, առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային ստաժ կամ 2 (երկու) տարվա մասնագիտական ստաժ, փաստաթղթաշրջանառության, վերահսկողական գործառույթների իրականացման, հաշվետվությունների կազմման, գործընթացների կազմակերպման, արդիականացման ու ստանդարտացման համապատասխան փորձառություն, որը ստուգվելու և նույնականացվելու է նախկին աշխատանքի վայրերից ներկայացված պաշտոնների նկարագրերով, տեղեկանքներով (այլ հիմնավոր փաստաթղթերով), ինչպես նաև անցկացվող հարցազրույցի արդյունքներով, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, անգլերեն լեզվի իմացություն, իրավական և նորմատիվ ակտերի հետ աշխատելու ունակություն և փորձ:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

4. Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Փորձագետը Ծրագրի 4-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում իրականացնում է Ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

1) իրականացնում է փաստաթղթերի և տեղեկատվության հոսքի կառավարման համակարգի գործնական ներդրման և փորձարկման գործընթաց,
2) ուսումնասիրում և Բաժնի պետին է ներկայացնում Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների առանձնահատկությունները ներքին ընթացակարգերի թվայնացման նախագծի իրականացման նպատակով,
3) աջակցում է որակի աուդիտի անցկացման ընթացակարգերի մշակման գործընթացներին,
4) իրականացնում է փաստաթղթերի ձևաչափային ստանդարտացում,
5) վերահսկում է ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով իրականացված գործընթացների համապատասխանությունը գործող պահանջներին,
6) իրականացնում է ներքին աշխատանքային գործընթացների մշտադիտարկում և համակարգային կատարելագործում՝ Բաժնի պետին առաջարկելով համակարգային թերությունների և անհամապատասխանությունների շտկման ուղիներ,
7) իրականացնում է որակի կառավարման համակարգի գործընթացների արդյունավետության վերլուծությունները և դրանց վերաբերյալ պարբերաբար զեկույցներ ներկայացնում Բաժնի պետին,
8) Կոմիտեի պաշտոնական կայքի տեղեկատվական շրջանառության ապահովվում:

6. Փորձագետին Ծրագրի 4-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում կարող է հանձնարարվել կատարել հետևյալ լրացուցիչ աշխատանքները.

1) Տվյալների կառավարման համակարգերի ավտոմատացման նորարարական լուծումների ուսումնասիրություն,

2) որակի կառավարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընթացակարգերի օպտիմալացման ծրագրերի և գործիքների մշակում,

3) թվայնացման գործընթացների ներդրման ժամանակացույցի և գործողությունների պլանի մշակում,

4) ներքին ընթացակարգերի թվայնացման մեթոդների փորձարկում և գնահատում՝ ընդհանուր ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով,

5) գործընթացների համապատասխանության գնահատման մեթոդների մշակում,

6) որակի կառավարման գործընթացների վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ Բաժնի պետին (այսուհետ՝ Բաժնի պետ):

7. Փորձագետի կողմից կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է Բաժնի պետի կողմից՝ բավարար, լավ կամ գերազանց:

VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

9. Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

10. Գնահատման համար չափանիշները սահմանվում են՝ ըստ 4-րդ բաժնի 5-րդ կետի 1-7-րդ ենթակետերով սահմանված աշխատանքների արդյունքների:

11. Համապատասխանաբար վերջնարդյունքների չափանիշներն են՝

1) 4-րդ բաժնի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված գործընթացի իրականացումից հետո ներկայացրել է տեղեկատվության հոսքի և փաստաթղթերի կառավարման համակարգի գործնական ներդրման և կառավարման գործընթացի ավարտական հաշվետվություն,

2) 4-րդ բաժնի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացումից հետո ներկայացրել է զեկույց՝ ներքին գործընթացների թվայնացման նախագծի համատեքստում Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքներով,

3) 4-րդ բաժնի 5-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացումից հետո ներկայացրել է որակի աուդիտի ընթացակարգերի ներդրման գործընթացի ավարտական հաշվետվություն,

4) 4-րդ բաժնի 5-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացումից հետո տրամադրել է հաշվետվություն փաստաթղթերի ձևաչափային ստանդարտացման գործընթացի արդյունավետության մասին,

5) 4-րդ բաժնի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացման շրջանակում պարբերաբար զեկուցել է ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով իրականացված գործընթացների համապատասխանության մասին,

6) 4-րդ բաժնի 5-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացումից հետո պարբերաբար ներկայացրել է ներքին աշխատանքային գործընթացների շարունակական մշտադիտարկման և կատարելագործման վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև առաջարկներ՝ համակարգային թերությունների շտկման վերաբերյալ,

7) 4-րդ բաժնի 5-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված գործընթացի ավարտից հետո իրականացրել է որակի կառավարման համակարգի գործընթացների արդյունավետության վերլուծություններ և դրանց վերաբերյալ պարբերաբար զեկույցներ ներկայացնել,

8) 4-րդ բաժնի 5-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված գործընթացի իրականացման շրջանակում պարբերաբար զեկուցել է կայքի տեղեկատվական կառավարման հետ կապված միջոցառումների և խնդիրների մասին:

9) 4-րդ բաժնի 6-րդ կետի 1-ից 6-րդ ենթակետերով սահմանված գործընթացների իրականացման դեպքում հաշվետվություն է ներկայացրել Բաժնի պետի կողմից ներկայացված համապատասխան ձևաչափով և հաճախականությամբ: